Հավելված N
,,Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,,
պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի
,,--------,,---------- թ. N -------- հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) «Ամբերդ» հետազոտական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասությունների սահմաններում ապահովում է Համալսարանին օրենքով և այլ իրավական ակտերով վերապահված խնդիրների և գործառույթների իրականացումը:

1.2. Կենտրոնի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոն.

2) հայերեն կրճատ՝ «Ամբերդ» կենտրոն.

3) ռուսերեն լրիվ՝ Исследовательский центр «Амберд» Армянского государственного экономического университета.

4) ռուսերեն կրճատ՝ центр «Амберд».

5) անգլերեն լրիվ՝ «Amberd» Research Center of Armenian State University of Economics.

6) անգլերեն կրճատ՝ «Amberd» Center:

1.3. Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, Համալսարանի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

1.4. Կենտրոնը իրավաբանական անձ չի հանդիսանում: Կենտրոնն իր գործունեությունն իրականացնում է Համալսարանի անունից:

1.5. Կենտրոնն ունի խորհրդանիշ, որի նկարագրությունը հաստատում է Համալսարանի ռեկտորը:

1.6. Կենտրոնն կարող է ունենալ իր անվամբ կնիք և ձևաթուղթ՝ Համալսարանին իր պատկանելիության նշումով:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. Կենտրոնի ստեղծման նպատակներն են՝

1) Համալսարանում գիտահետազոտական, գիտակրթական և գիտամեթոդական գործունեության զարգացումը, ազգային մրցունակության և միջազգայնացման, սոցիալ-տնտեսական և անվտանգության քաղաքականության ոլորտներում հետազոտական ծրագրերի իրականացումը,

2) Համալսարանի գիտական մտքի համախմբումը,

3) կրթական գործընթացի հետ գիտական հետազոտությունների կապի ապահովումը,

4) հետազոտական աշխատանքների արդյունքների առևտրայնացումը,

5) նորարարական մշակումների իրականացումը,

6) հետազոտությունների արդյունքների հրապարակայնացումը,

7) հետազոտական պայմանագրերի և դրամաշնորհների ներգրավումը,

8) գիտական սեմինարների և աշխատաժողովների անցկացումը,

9) գիտահետազոտական աշխատանքներին ուսանողների մասնակցության ապահովումը:

2.2. Նշված նպատակների կենսագործման համար Կենտրոնն ուսումնասիրում և տեղայնացնում է առաջատար «ուղեղային կենտրոնների» փորձը և իրականացնում է հետևյալ խնդիրները.

- համակարգային հետազոտությունների և մշակումների իրականացում՝ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման և անվտանգության քաղաքականության հեռանկարային ոլորտներում,
- մշտադիտարկման և կանխատեսման առաջավոր մեթոդաբանությունների ուսումնասիրություն և իրականացում,
- հետազոտական, փորձագիտական-վերլուծական խորհրդատվական գործունեության իրականացում՝ կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց համար,
- Համալսարանի կողմից իրականացվող գիտական հետազոտություններին վերաբերող հայաստանյան և համաշխարհային փորձի ուսումնասիրություններ,
- հետազոտական և փորձագիտական-վերլուծական աշխատանքներում ուսանողների, ասպիրանտների և դասախոսների ներգրավում, նրանց գիտական, ստեղծագործական մտքի զարգացման համար համապատասխան պայմանների ստեղծում,
- հայաստանյան, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ հետազոտական գործունեության կազմակերպում,
- կրթական գործընթացում Կենտրոնի կողմից իրականացված հետազոտությունների ու մշակումների արդյունքների գործնական կիրառման աջակցություն,
- գիտական սեմինարների, գիտաժողովների կազմակերպում և անցկացում՝ հայաստանցի և օտարերկրյա մասնագետների մասնակցությամբ,
- հետազոտությունների արդյունքների հրապարակում և հանրայնացում:

2.3. Կենտրոնն իր առջև դրված նպատակների և խնդիրների իրականացման համար, իր իրավասությունների սահմաններում կատարում է հետևյալ գործառույթները.

- իրականացնում է Հայաստանի Հանրապետության մրցունակության և մջազգայնացման, սոցիալ-տնտեսական զարգացման և անվտանգության ապահովմանն ուղղված կիրառական և հիմնարար հետազոտություններ,

- բացահայտում է տնտեսագիտական բնույթի հետազոտական կարիքները և ձևավորում գիտական հետազոտությունների ծրագրեր, այդ թվում՝ երկարաժամկետ հատվածի համար,
- քաղաքացիական-իրավական պայմանագրերի և պետական պայմանագրերի հիման վրա իրավաբանական և ֆիզիկական անձանց համար կատարում է գիտական հետազոտությունների և մշակումների պատվերներ,
- պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպում է ծրագրային փաստաթղթերի փորձաքննություն,
- խթանում է դասախոս-ուսանող համատեղ հետազոտական աշխատանքների կատարումը,
- հետազոտական գործունեության իրականացմանը ներգրավում է արտասահմանյան գիտնականների և փորձագետների,
- նպաստում է անհրաժեշտ տեղեկատվական և նյութատեխնիկական բազայի ձևավորմանն ու զարգացմանը, ստեղծում է տնտեսագիտական և Կետրոնի հետաքրքրությունների շրջանակներում գտնվող այլ հետազոտությունների էլեկտրոնային բանկ և պարբերաբար համալրում,
- կազմակերպում է հետազոտությունների արդյունքների հրապարակումը,
- իրականացնում է Համալսարանի ռեկտորի հրամաններով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Կենտրոնի կառավարման բարձրագույն մարմինը Խորհրդատուների խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ), որի նախագահը ՀՊՏՀ ռեկտորն է: Խորհրդի կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով: Խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները.

- հաստատում է՝ Կենտրոնի կանոնադրությունը, գիտական հայտերի ներկայացման, մրցույթների անցկացման և հաշվետվությունների ընդունման կարգերը,

գործունեության տարեկան ծրագիրը, տարեվերջյան հաշվետվությունը և հետազոտական ծրագրերը:

3.2. Կենտրոնի աշխատակազմը Համալսարանի աշխատակազմի բաղկացուցիչ մասն է և աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են օրենսդրությամբ սահմանված կարգով և Համալսարանի կանոնադրությամբ:

3.3. Կենտրոնը ղեկավարում է Կենտրոնի տնօրենը, ում աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Համալսարանի ռեկտորը՝ գործող օրենսդրության և Համալսարանի կանոնադրության համապատասխան: Կենտրոնի տնօրենը Կենտրոնի գործունեության արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն է ներկայացնում Համալսարանի գիտական խորհրդին և ռեկտորին:

3.4. Կենտրոնի տնօրենը անձնական պատասխանատվություն է կրում Կենտրոնի գործունեության արդյունքների, Կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների որակի և Կենտրոնի գործառույթների պատշաճ կատարման, Կենտրոնում աշխատանքային կարգուկանոնի պահպանման համար: Կենտրոնի տնօրենը.

- կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Կենտրոնի ընթացիկ գործունեությունը,
- Կենտրոնին վերապահված խնդիրների և գործառույթների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Համալսարանի ռեկտորին,
- Համալսարանի ռեկտորի հաստատմանն է ներկայացնում Կենտրոնի կառուցվածքը և հաստիքացուցակը,
- իր իրավասության սահմաններում հանձնարարություններ է տալիս Կենտրոնի աշխատակիցներին,
- ի պաշտոնե հանդիսանում է Համալսարանի գիտական խորհրդի և «ԱՄԲԵՐԴ» հետազոտական կենտրոնի Գիտական խորհրդատուների խորհրդի անդամ,
- ռեկտորին առաջարկություններ է ներկայացնում Կենտրոնի աշխատակիցների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ,

- ապահովում է ռեկտորի հրամանների, ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների և Կենտրոնի գիտական խորհրդատուների խորհրդի որոշումների կատարումը,
- իրականացնում է աշխատանքի բաժանում աշխատակիցների միջև,
- զբաղվում է Կենտրոնի միջազգային համագործակցության ընդլայնման հարցերով,
- հանդես է գալիս Կենտրոնի անունից, Կենտրոնի անունից սահմանված կարգով կնքում է պայմանագրեր,
- կազմակերպում և ապահովում է Կենտրոնի գործավարությունը,
- սահմանված կարգով մշակում և ռեկտորի հաստատմանն է ներկայացնում սույն կանոնադրությունում փոփոխությունները և լրացումները,
- իրականացնում է Համալսարանի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ռեկտորի հրամաներով, այլ իրավական ակտերով և պաշտոնի անձնագրով նախատեսված այլ գործառույթներ:

3.5. Կենտրոնի աշխատակիցների իրավունքները և պարտականությունները որոշվում են ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3.6. Կենտրոնի աշխատակիցները իրավունք ունեն՝

1) մասնակցել Կենտրոնի գործունեությանն առնչվող կազմակերպական հարցերի քննարկմանը,

2) զբաղվել մասնագիտական գործունեությամբ և գիտահետազոտական աշխատանքով,

3) Կենտրոնի սարքավորումները և տարածքները, ինչպես նաև՝ Համալսարանի կրթական, գիտական, սոցիալ-կենցաղային և այլ ռեսուրսները սահմանված կարգով օգտագործել հետազոտական և գիտական գործունեության համար,

4) հանդես գալ Կենտրոնի և իրենց վերապահված ոլորտներում իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններով:

3.7. Կենտրոնի աշխատակիցները պարտավոր են՝

1) ապահովել մասնագիտական գործունեության և գիտական հետազոտությունների բարձր մակարդակ,

2) պահպանել Համալսարանի կանոնադրությունը, սույն կանոնադրությունը և Համալսարանի ներքին կարգուկանոնը,

3) խնայողաբար վերաբերվել Կենտրոնի և Համալսարանի գույքին:

3.8. Պետական մարմինների և նյութական ու տեխնիկական ռեսուրսների մատակարարների հետ Կենտրոնի փոխհարաբերությունների հիմքն են հանդիսանում Համալսարանի անունից կնքված տնտեսական պայմանագրերը: Ռեկտորը կարող է Կենտրոնի տնօրենին լիազորել համալսարանի անունից տնտեսական պայմանագրերի կնքման և ֆինանսական գործառնությունների կատարման իրավունք՝ Կենտրոնի ֆինանսավորման համար հատկացվող միջոցների շրջանակներում:

3.9. Վիճակագրական, կադրային և հաշվապահական հաշվառումն իրականացվում են Համալսարանի համապատասխան բաժինների կողմից:

3.10. Կենտրոնը միջազգային գործունեություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և Համալսարանի գիտական խորհրդի որոշումներին համապատասխան:

3.11. Կենտրոնի վերակազմավորումը իրականացվում է Համալսարանի ռեկտորի կողմից, սահմանված կարգով:

3.12. Կենտրոնի լուծարումը կարող է իրականացվել միայն Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ և կանոնակարգվում է Համալսարանի կանոնադրության դրույթներով:

Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի ռեկտոր՝ Կ.ԱԹՈՅԱՆ